

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քաղ է ստորագրման և վավերացման համար Գլխավոր ասամբլեայի 1952 թվականի դեկտեմբերի 20-ի 640 (VII) բանաձևով

Ուժի Մեջ է Մտել՝ 1954 թվականի հուլիսի 7-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը որոշում է.

Միանալ 1953 թվականի մարտի 31-ին Նյու Յորք քաղաքում ստորագրված Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիային:

Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի նախագահ Տ. Թորոսյան

24 հոկտոմբերի 2007 թվականի, քաղ. Երևան, Ն-025-4



ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պայմանավորվող կողմերը

ցանկանալով իրականացնել տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքը՝ նշված Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ, ընդունելով, որ յուրաքանչյուր մարդ իր երկրի կառավարմանն անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իրավունք ունի և իր երկրում պետական ծառայության հավասար մատչելիության իրավունք, ինչպես նաև ցանկանալով, ըստ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթների, հավասարեցնել կանանց և տղամարդկանց քաղաքական իրավունքների տնօրինման և օգտագործման հարցում:

*որոշելով այդ նպատակով կնքել կոնվենցիա.
սույնով համաձայնել են ներքոհիշյալին:*

Հոդված I

Կանայք տղամարդկանց հետ հավասար պայմաններում, առանց որևէ արգելքի, իրավունք ունեն քվեարկելու բոլոր ընտրություններում:

Հոդված II

Կանայք տղամարդկանց հետ հավասար պայմաններում, առանց որևէ խտրականության, կարող են ընտրվել ազգային օրենքով հաստատված և հրապարակային ընտրություններ պահանջող բոլոր հաստատություններում:

Հոդված III

Կանայք, տղամարդկանց հետ հավասար պայմաններում, հասարակական-պետական պաշտոններ զբաղեցնելու և ազգային օրենքով սահմանված բոլոր հասարակական-պետական գործառույթները կատարելու իրավունք ունեն:

Հոդված IV

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամի, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի կողմից իրավեր ստացած ցանկացած ուրիշ պետության համար:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, և վավերագրերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:



Հոդված V

1. Սույն Կոնվենցիան բաց է միանալու համար IV հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետությունների համար:

2. Միացումը կատարվում է միանալու մասին հայտարարությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով:

Հոդված VI

1. Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում վեցերորդ վավերագրի կամ միանալու մասին հայտարարությունը հանձնելու օրվանից սկսած 90-րդ օրը:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է այս Կոնվենցիան կամ միանում է նրան վեցերորդ վավերագիրը կամ միանալու մասին հայտարարությունը ի պահ հանձնելուց հետո, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում տվյալ պետության կողմից վավերագիրը կամ միանալու մասին հայտարարությունը ի պահ հանձնելուց հետո 90-րդ օրը:

Հոդված VII

Սույն կոնվենցիան վավերացնելիս կամ դրան միանալու որևէ պետության կողմից որևէ հոդվածի վերաբերյալ վերապահում ներկայացնելու դեպքում Գլխավոր քարտուղարն այդ վերապահման տեքստը հաղորդում է այն բոլոր պետություններին, որոնք այդ Կոնվենցիայի մասնակիցներն են կամ մասնակիցներ կարող են դառնալ: Յուրաքանչյուր պետություն, որն առարկում է այդ վերապահման դեմ, կարող է 90 օրվա ընթացքում, սկսած տվյալ հաղորդման ամսաթվից (կամ այն օրվանից, երբ ինքը Կոնվենցիայի մասնակից է դարձել), տեղեկացնել Գլխավոր քարտուղարին, որ ինքն այն չի ընդունում: Այդ դեպքում տվյալ պետության միջև կոնվենցիան ուժի մեջ չի մտնում:

Հոդված VIII

1. Յուրաքանչյուր պետություն կարող է անվավեր հայտարարել սույն Կոնվենցիան՝ գրավոր ծանուցելով այդ մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Անվավեր հայտարարելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումը ստանալուց մեկ տարի անց:

2. Սույն Կոնվենցիան կորցնում է ուժը այն անվավեր ճանաչումն ուժի մեջ մտնելուց հետո, որից հետո Կոնվենցիայի մասնակից պետությունների թիվը դառնում է վեցից պակաս:



Հոդված IX

Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ յուրաքանչյուր վեճ ցանկացած երկու կամ մի քանի պայմանավորվող պետությունների միջև, որը չի լուծվում բանակցությունների միջոցով, այդ վեճի որևէ կողմի պահանջով փոխանցվում է Միջազգային դատարանի որոշմանը, երե նրանք չպայմանավորվեն դրա կարգավորման այլ կարգի մասին:

Հոդված X

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը տեղեկացնում է ներքոհիշյալի մասին Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք նշված են սույն կոնվենցիայի IV հոդվածի 1-ին կետում.

ա) ստորագրությունների և վավերագրերի մասին՝ ստացված IV հոդվածի համաձայն,

բ) միանալու մասին հայտարարությունների մասին՝ ստացված V հոդվածի համաձայն,

գ) սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու մասին՝ VI հեդվածի համաձայն,

դ) հաղորդումների և ծանուցումների մասին՝ ստացված VII հոդվածի համաձայն,

ե) անվավեր ճանաչելու վերաբերյալ ծանուցումների մասին՝ ստացված VIII հոդվածի 1-ին կետի համաձայն,

զ) Կոնվենցիան ուժը կորցնելու մասին՝ VIII հոդվածի 2-րդ կետի համաձայն:

Հոդված XI

1. Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, իսպաներոն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարապես նույնական են, պահվում է Միավորված ազգերի կազմակերպության արխիվում:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնցենցիայի հաստատված պատճենները փոխանցում է Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետություններին և Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք նշված են IV հոդվածի 1-ին կետում:

